

Նորարարություն և ԳՅՈՒՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՁԳՈՎԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՆՈՐ ՀԱՐՄԱՐԱՆՔ

Բ. ՎԱՐԴԱԶԱՐՅԱՆ
Ինժեներ

Կիրովականի Կամոյի անվան տրիկոտաժի ֆաբրիկայի գլխավոր ինժեներ Վ. Մանուկյանը կառուցել է ձգովի կարգավորող նոր հարմարանք՝ սեկցիոն-հինող մեքենաների համար։ Այդ հարմարանքը, որը տեղադրված է հենքագործելու ցեխում, նախատեսված է հինելու ժամանակ մետաքսյա միայնակ թելի ձգման համար։

Ֆաբրիկան ձգովի կարգավորող հարմարանքները ստացել է Գերմանական Դեմոկրատական Ռեսպուբլիկայից։ Նրանք պատրաստված են եղել ճենապակուց, որը աշխատանքի ընթացքում կոտրվում էր և շարքից դուրս գալիս։ Նոր հարմարանքի պատրաստման համար իբրև նյութ ծառայում է ալյումինիումը։

Հարմարանքի կոնստրուկցիան շատ պարզ է և տալիս է մեծ արտադրական էֆեկտ։

Հարմարանքը բաղկացած է ձուլված ալյումինե ուղղանկյունուց (1), որը վզիկի միջոցով միացված է կալիչին (2)։ Կալիչի միջոցով հարմարանքը տեղավորվում է հինող մեքենայի հինող շրջանակի (шпулярник) ձողի վրա։

Ուղղանկյուն իրանի (1) երկու կողմերում գտնըվում են ճենապակյա անցքեր՝ աչիկներ (3), որոնց միջոցով թելը մտնում և դուրս է գալիս։

Ուղղանկյան ներսի մակերևույթի վրա դըրվում են երկու ապակե թիթեղիկներ (4), որոնք ունեն հղկած նիստեր։ Ներքևի թիթեղիկը տեղավորված է այնպես, որ նրա վերևի մակերևույթը համընկնում է անցքերի առանցքի (3) հետ։ Երբ թելն անցնում է երկու անցքերով, ներքևի թիթեղիկի և թելի վրայից տեղավորվում է երկրորդ թիթեղիկը։ Վերևի ապակե թիթեղիկի կշիռը ապահովում է թելի անհրաժեշտ ձգումը։



Նկ. 1. Հարմարանքի ընդհանուր տեսքը։

Հարմարանքի նորմալ աշխատանքի և նրա լավագույն էֆեկտիվության համար անհրաժեշտ է պարբերաբար մաքրել ապակիների աշխատանքային մակերևույթները։ Մեկ տարվա արդյունաբերական փորձարկման ընթացքում հարմարանքն արդարացրել է իրեն և ապահովել տարեկան 43 200ռ. պայմանական տնտեսում։